ISSN 1829-2925

Շողիկ

Shoghik
2023/3

AMAA
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վան Գոգի «Աստղազարդ գիշերը»

Հիմնադիր՝
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Խմբագրական խորհուրդ՝
Պատասխանատու խմբագիր՝ վեր. Ավետիք Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Լիլիթ Անտոնյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Լյուսյա Առաքելյան
Էջերի ձևավորումը՝ Արման Սարգսյանի

Գրանցման վկայական՝
01Ս 000035
Հրատարակչության 22-րդ տարի

Editorial Board:
Chief Editor: Rev. Avetik Khachatryan
Content Manager: Lilit Antonyan
Copy Editor: Lyusya Arakelyan
Design and Illustration: Arman Sargsyan

«Շողիկ» -ից մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն (AMAA)

ՀՀ, 0019, Երևան, Բաղրամյան 18
(+374 10) 54 35 52; 54 35 76
www.shoghik.am
ce@eca.am

© ՀԱԵ / ECA

Տպագրվել է «Մագաղաթ» տպարանում:
Տպաքանակը՝ 4.000:
Տարածվում է անվճար:

ԵՐԱՆԻ ԽԱՂԱՂԱՐԱՐՆԵՐԻՆ

Հիսուս Քրիստոսն իր ծառայությունն ու պատգամը սկսում է «երանիներով», քանի որ Նա աշխարհ էր եկել օրհնություն տալու համար. «Աստված Իր Որդի Հիսուսին... ուղարկեց, որ ձեզ օրհնի...» Գործք 3.26: Լեռան քարոզում Հիսուսի հնչեցրած երանիները մեզ ցույց են տալիս, թե ովքեր են այն երջանիկները, որ երանելի պետք է կոչվեն և Աստծո խոստումները ժառանգեն:

Եթե այսօր ինքներս մեզ հարցնենք, թե ովքեր են երանելի մարդիկ, հավանաբար կպատասխանենք՝ հարուստները, ովքեր հնարավորություն ունեն ուրախանալու, տարբեր տոնախմբությունների մասնակցելու, ովքեր առողջ են և ոչ մի հոգս չունեն... Բայց Հիսուսը փոխում է երանելի մարդու մասին մեր պատկերացումները և նոր չափանիշներ է տալիս՝ ցույց տալով, որ Աստծո սերն ուղղված է նախ աղքատին ու տկարին, սգավորին, արդարության քաղցն ունեցողին... Սա թերևս շատերի համար անհասկանալի է:

Երանի խաղաղարարներին... Խաղաղություն (շալոմ) ասելով նկատի չունենք անհանգստությունների և մտահոգությունների բացակայություն, այլ այն ամենը, ինչ օգնում է մարդուն՝ բարձրագույն բարիքի հասնելու համար: Այսինքն՝ խաղաղություն նշանակում է ամենայն բարիքի վայելում: Այն ունենալու համար նախ և առաջ պետք է սեր ունենալ սրտում: Որովհետև երբ Աստված, մեղավոր մարդու հետ, Իր Որդու միջոցով խաղաղություն հաստատեց, պատճառը միայն Նրա անսահման սերն էր: Ուստի խաղաղարար լինելը պասիվ գործընթաց չէ, այլ հստակ գործողությունների շարք:

...որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն: Աստված խաղաղության Աստված է, Նրա Որդին՝ խաղաղության Իշխան: Մենք էլ, խաղաղարար լինելով, պատիվ ունենք Նրա որդին կոչվելու: Ուրեմն, եկեք չվախենանք իրականության աչքերին նայելուց, խնդիրներից, այլ վերակագնենք և վերանորոգենք ճեղքված հարաբերությունները, պայքարենք հանուն խաղաղության, որովհետև «երանի խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն»:
Մատթեոս 5.9

Լիլիթ Անտոնյան

ԱԲՐԱՄՆ ՈՒ ՂՈՎՏԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՐԻՑ

Աբրամն իր կնոջ՝ Սարայի հետ բնակվում էր Խառանում: Նրանք բավականին ծեր էին և զավակ չունեին: Արդ, Աստված ասաց Աբրամին. «Դո՛ւրս եկ քո երկրից ու ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ Ես քեզ ցույց կտամ: Ես քեզ մեծ ազգ եմ դարձնելու, և քեզ օրհնելու եմ և քո անունը բարձրացնելու, և դու օրհնություն ես լինելու: Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին և պիտի անիծեմ քեզ անիծողներին, և երկրի բոլոր տոհմերը քեզնով պիտի օրհնվեն»:

Եվ Աբրամը գնաց, ինչպես ասել էր նրան Աստված: Աբրամը յոթանասունհինգ տարեկան էր, երբ հեռացավ Խառանից: Նա առավ իր կին Սարային, իր եղբորորդի Ղովտին, Խառանում ձեռք բերած ողջ ունեցվածքն ու իր հետ ապրող բոլոր մարդկանց: Նրանք ճանապարհ ընկան դեպի Քանանի երկիր: Աբրամն այս երկրով անցավ մինչև Սյուքեմ վայրը՝ Բարձր կաղնին: Այդտեղից շարժվեց դեպի Բեթել, որտեղ Տիրոջ համար զոհասեղան շինեց և կանչեց Տիրոջ անունը: Սակայն այս երկրում սով սկսվեց, և Աբրամը իջավ Եգիպտոս ու որոշ ժամանակ այս երկրում բնակվեց:

Ապա իր ամբողջ ունեցվածքով Եգիպտոսից գնաց դեպի հարավ՝ իր կինը և Ղովտն էլ նրա հետ: Աբրամը շատ հարուստ էր անասուններով, արծաթով և ոսկով: Նա հարավային կողմից գնաց Բեթել, որտեղ առաջ նրա վրանն էր խփված՝ Բեթելի և Գայիի միջև, այն զոհասեղանի տեղը, որ սկզբում շինել էր. և այնտեղ Աբրամն Աստծո անունը կանչեց: Եվ Ղովտն էլ, որ Աբրամի հետ գնացել էր, նույնպես ուներ արջառներ, ոչխարներ, վրաններ:

Արդ, այդ երկիրը բավական չէր նրանց միասին բնակվելու համար, քանի որ նրանց մեծ ունեցվածքը շատ էր: Կռիվ եղավ Աբրամի հոտերի հովիվների ու Ղովտի հոտերի հովիվների միջև: Աբրամն ասաց Ղովտին. «Թող իմ ու քո միջև, իմ ու քո հովիվների միջև կռիվ չլինի, որովհետև մենք եղբայրներ ենք: Մի՞թե ամբողջ երկիրը քո առաջ չէ. խնդրում եմ քեզ, բաժանվի՛ր ինձնից: Եթե դու ձախ գնաս, ես աջ կգնամ, իսկ եթե դու աջ գնաս, ես ձախ կգնամ»:

Եվ Ղովտը իր աչքերը բարձրացրեց և տեսավ Հորդանանի ամբողջ շրջակայքը, որ լավ ոռոգված էր և այն ընտրեց իր համար, իսկ Աբրամը Քանանի երկրում բնակվեց: Այսպես Աբրամն ու Ղովտը բաժանվեցին միմյանցից:

ԱԲՐԱՄԸ ԵՎ ՂՈՎՏԸ ԲԱԺԱՆՎԵՑԻՆ, ՈՐՊԵՍԶԻ ԻՐԵՆՑ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՌԻՎ ՉԼԻՆԻ: ԱԲՐԱՄԸ ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ ԵՂԱՎ:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՎ Ո՞ՒՄ ՀԵՏ ԵՔ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑԿԱՑՆԵԼ

Արդ ուշադրությո́ւն դարձրեք ձեր վարքին. վարվե՛ք ոչ թե անխելքների պես, այլ իմաստունների. ճի՛շտ օգտագործեք ժամանակը, որովհետև օրերը չար են: Դրա համար անմիտ մի՛ եղեք, այլ իմացե՛ք, թե որն է Տիրոջ կամքը:
Եփեսացիների 5.15-17

Բոլորս սիրում ենք ժամանակ անցկացնել մեր մտերիմների, ընկերների հետ: Երբեմն սիրում ենք առանձնանալ մեր սենյակում: Երբեմն էլ նախընտրում ենք ժամերով խաղալ համակարգչային խաղեր, մուլտֆիլմ դիտել կամ երաժշտություն լսել, որևէ խմբակ հաճախել կամ զբոսնել:

Գիտե՞ք՝ Հիսուսն ու Իր աշակերտները նույնպես իրենց ժամանակը տարբեր կերպ էին անցկացնում. նրանք նավարկում էին, որևէ մեկի տանը ճաշում, քաղաքից քաղաք շրջում, երբեմն անգամ՝ հարսանիքի մասնակցում:

Բայց ամենից հաճախ Հիսուսն Իր աշակերտների հետ ժամանակ էր անցկացնում՝ խոսելով Աստծո մասին, առակներ պատմելով կամ հրաշքներ գործելով: Սա մեզ համար արդյունավետ ժամանակ անցկացնելու օրինակ կարող է լինել: Հաճախ է պատահում, որ հանդիպում ենք մեր մտերիմներին, մեր ընկերների հետ հետաքրքիր ժամանակ ենք անցկացնում, սակայն նկատում ենք, որ հեռախոսները մեր ձեռքից վայր չենք դնում կամ զրույցի մեծ մասը քննարկում ենք ուրիշների կյանքը: Դա որակյալ ժամանակ անցկացնել չէ:

Արդյունավետ ժամանակ անցկացնելը պետք է լինի միասին զրուցելը, Աստծո գործերի մասին պատմելը, միմյանցից սովորելը, հետաքրքիր խաղեր խաղալը և այլն: Որակյալ ժամանակ անցկացնելը սիրո արտահայտման ձևերից մեկն է, ինչի կարիքն ունեն մեր մտերիմները: Նաև հիշենք, որ առօրյա զվարճանքներից, դասերից ու խմբակներից զատ կարող ենք ժամանակ անցկացնել Աստծո հետ՝ ամեն օր ընթերցելով Աստվածաշունչը, հաճախելով մանկական խմբակ, աղոթելով:

Գործնական կիրառում
Նշի՛ր 3 բան, որ սիրում ես անել.

Միայնակ	Ծնողներիդ հետ	Ընկերներիդ հետ	Աստծո հետ

Գործք Առաքելոց, 1-5,10-11 գլ. (33 թ.-ից հետո)

Պետրոսը պատմում է Հիսուսի մասին

Պետրոսը Հիսուսին հանդիպել էր Գենեսարեթի լճի մոտ և դարձել Նրա աշակերտը: Նա հավատում էր, որ Աստված օգնում է իրեն՝ մարդկանց Հիսուսի մասին պատմել: Գտի՛ր Պետրոսին:

Գտի՛ր երկու զինվորներին:

Որտե՞ղ է տան տիրուհին:

Գտի՛ր 3 յուղի լամպերը:

Գտի՛ր հատակի խճանկարը:

Գտի՛ր երկու ծառաներին, որոնք տանում են կերակուրով ափսեներ:

Հռոմեացի հարյուրապետ Կոռնելիոսը հրավիրել է Պետրոսին, որ նա իրեն պատմի Հիսուսի մասին: Գտի՛ր Կոռնելիոսին:

Գտի՛ր բեռնավորված ավանակին:

Դու տեսնո՞ւմ ես ծառային, որը գրի է առնում Պետրոսի քարոզը:

Գտի՛ր խոհարարին, որը ևս լսում է Պետրոսին:

Դու տեսնո՞ւմ ես վեց երեխաներին, որոնք լսում են Պետրոսին:

Գտի՛ր այգեգործական մկրատը ձեռքին ստրուկին:

Գտի՛ր երկու ճնճղուկներին:

Գտի՛ր երկու կատուներին:

Գտի՛ր ոտքերի համար 3 աթոռակները:

Դու տեսնո՞ւմ ես մկանը:

Գտի՛ր հիրիկով ծաղկամանը:

Նկարեց Փիթեր ՔԵՆԹԸ

Կոռնելիոսը շատ աստվածավախ մարդ էր և, հնարավոր է, նույնիսկ սինագոգ էր հաճախում: Գտի՛ր ռաբբիին:

Գտի՛ր Թորայի մագաղաթը դարակում:

Կարո՞ղ ես գտնել գնդակը:

Եթե անգամ Թումանյանն անձամբ ձեզ պատմեր, որ մի ժամանակ խաղացել է թատրոնում՝ այն էլ մարմնավորելով սպանված զինվորի դեր, հնարավոր է՝ չհավատայիք, կամ առնվազն դժվարությամբ պատկերացնեիք այդ տեսարանը: Իսկ երբևէ կենթադրեի՞ք տեսնել Տերյանին թատրոնում՝ դահիճի դերում. ի դեպ այս մեկը կարծես թե Տերյանն ինքն էլ չէր պատկերացնում: Բայց փաստը մնում է փաստ, որ սրանք իրողություններ են:

Առհասարակ հայ մի շարք գրողներ, բարձր գնահատելով թատրոնի դերը հասարակական կյանքում, ժամանակին ըստ ամենայնի աջակցել են թատերական արվեստի զարգացմանը: Նրանցից շատերը ոչ միայն գրել են թատերգություններ, այլև կազմել են թատերական խմբակներ, հսկել են բեմադրական աշխատանքն ու դերասանական խաղը, երբեմն էլ իրենք են խաղացել և բեմադրություններ արել: Օրինակ՝ 1895 թ. փետրվարի 6-ին Թիֆլիսում ներկայացվել է «Ուրիել Ակոստա» թատերգությունը, որտեղ խաղացել են Ղազարոս Աղայանը, Շիրվանզադեն և Հովհաննես Թումանյանը:

Ի դեպ վերջինս, դեռևս դպրոցական տարիներից, հիացած էր դերասան Պետրոս Ադամյանով: Ավելին, «Վարդան Մամիկոնյան» թատերգության բեմադրության մեջ Թումանյանը նույնիսկ խաղացել է նրա հետ: Վերջին գործողության դրվագներից մեկում Թումանյանը խաղացել է սպանված զինվորի դեր, իսկ Ադամյանը կերպավորել է պատմիչ Եղիշեին: Բանաստեղծն իր հուշերում պատմում է, որ հանկարծ թատրոնը թնդաց ծափերից, և իր գլխավերևում հայտնվեց Ադամյանը. «Մի պահ մոռացա, որ ես սպանված զինվոր եմ, մի հարմար դիրք ընդունեցի, աչքերս բացեցի, որպեսզի մի լավ տեսնեմ Ադամյանին: Այդ պահին թուքս կոկորդս խցկվեց ու սկսեցի հազալ: Այնքան ուժեղ էի հազում ու շարժվում, որ դեկորացիան սկսեց օրորվել: Թատրոնում ընդհանուր ծիծաղ բարձրացավ, գալերիան սկսեց աղմկել ու աղաղակել: Գործողությունը մի կերպ վերջացավ: Վարագույրն իջավ թե չէ, Ադամյանը տեղից թռավ դեպի մեռած զինվորները՝ կատաղած գոռալով. «Ան ո՞վ էր, ծօ...»: Այդ պահին ժողովուրդը սկսեց դղրդալի ծափահարություններով Ադամյանին կանչել: Ես, այդ խառնակ դրությունից ազատվելով, փախա...»:

Շատ կարճ, բայց հետաքրքիր ընթացք է ունեցել բանաստեղծ Վահան Տերյանի առնչությունը թատրոնին: Նա ուսանողական տարիներին «Շուշանիկ» ողբերգության մեջ խաղացել է դահիճի դերը: Իսկ ուշագրավն այն է, որ Տերյանն այնքան անտարբեր ու անհաղորդ է եղել բեմում կատարվողի հանդեպ, որ բեմադրիչը ստիպված դուրս է հրավիրել նրան:

Թատրոնում խաղացել է նաև գրող Պերճ Պռոշյանը: 1862-ին նա Թիֆլիսում հավաքել է թատերական խումբ: Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հիման վրա Պռոշյանը գրել է «Աղասի» խորագրով ողբերգությունը, որն առաջին անգամ բեմադրվել է 1863-ին: Պռոշյանը խաղացել է հենց Աղասու դերը:

Գրող Վրթանես Փափազյանն էլ, թատերագիր լինելուց զատ, նաև լավ ջութակահար էր: Դերենիկ Դեմիրճյանը պատմում է, որ իր «Հայրենիքի համար» թատերգությունն առաջին անգամ բեմադրել և դրա համար երաժշտություն գրել է հենց Փափազյանը: Գաբրիել Սունդուկյանն էլ բազմիցս ինքն է ստանձնել իր գրական գործերի բեմադրական աշխատանքները: 1889-ին, օրինակ, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսանողությունը բեմադրել է «Պեպոն» հենց Սունդուկյանի օգնությամբ:

Մուրացանն էլ անմասն չէր թատրոնից ու թատերական կյանքի զարգացումներից: Նա էլ իր հերթին զանազան առիթներով անդամակցել է Թիֆլիսի «Հայոց դրամատիկական ակումբի», կոմիտեի և թատերական այլ ընկերությունների հանձնաժողովներին:

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՁԻԲ Է ԱՌԵԼ ՇՈՒՄԵՐԻՑ

Շումերը հնագույն քաղաքակրթություն է, որը գոյատևել է մինչև Ք.ա. III հազարամյակի վերջը հարավային Միջագետքում, որտեղ Տիգրիս ու Եփրատ գետերը լցվում են Պարսկական ծոց: Շումերների ծագումը, սակայն, անհայտ է: Վարկած կա, որ շումերներն ի սկզբանե չեն ապրել հարավային Միջագետքում, այլ եկել են հյուսիսային Միջագետքից՝ Հայկական լեռնաշխարհին հարակից շրջանից: Շումերներն իրենց երբեք չեն անվանել «Շումեր» (այդ տերմինը ծագել է 19-րդ դարի հետազոտությունների ժամանակ), այլ կոչել են «սևագլուխներ» կամ «քաղաքի որդիներ», իսկ իրենց երկիրը՝ կի–էն–գիր («քաղաքակիրթ տիրակալների երկիր»):

Ըստ հնագետների՝ շումերներն առաջինն էին, որ կարողացան ցամաքեցնել ճահիճները և ստեղծել ոռոգման համակարգ, քանի որ միայն այդպես էր հնարավոր Տիգրիս և Եփրատ գետերի հովտում զբաղվել գյուղատնտեսությամբ:

Շումերները նաև առաջինն էին, որ ստեղծեցին գիրը, թողեցին գրավոր վկայություններ:
Ք.ա. 4-րդ հազարամյակի վերջին շումերները ստեղծեցին պատկերագիրը, իսկ Ք.ա. 3-րդ հազարամյակի կեսին՝ սեպագիրը:
Նրանք գրում էին չթրծված կավե սալիկների վրա:
Գիրը կոչվում էր սեպագիր, որովհետև նշանները շատ նման էին փոքրիկ սեպերի:

Հետաքրքիր է՝ շումերական գրերի մի շարք նշաններ վերցված են Հայկական լեռաշխարհի ժայռապատկերներից:

Ավելին, հայերենում և շումերերենում բազմաթիվ բառեր նույն իմաստն են արտահայտում և որոշ շումերական սեպագրերում տեքստի մինչև 80 տոկոսը կարելի է հայերեն ընթերցել: Նրանց բնագրերում նաև բազմիցս հիշատակվում է Արատտա երկիրը, որը Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումն է: Արձանագրությունների համաձայն՝ այն գտնվել է Վանա լճի ավազանում: Այն բնութագրվում է որպես հարուստ վայր՝ ոսկով, արծաթով և ուրիշ թանկարժեք մետաղներով լի, որը դժվար էր հասնել:



Գիտնականները մեծ դժվարությամբ են վերծանել շումերների սեպագիր արձանագրությունները, որոնցից բավականին հետաքրքիր փաստեր են պարզվել: Պարզվում է՝ դեռևս հազարավոր տարիներ առաջ շումերները տիրապետել են մաթեմատիկային և աստղագիտությանը: Ստեղծել են աշխարհի ամենահին օրենքների ժողովածուն, մեզ տվել են պատմության ուսումնասիրությունը և առաջին պատմական փաստաթուղթը՝ Նիպուրական արքաների ցանկը:

Կարողացել են հաշվել, թե տարին քանի օր ունի, այն բաժանել են 12 ամիսների, իսկ շաբաթը՝ յոթ օրերի: Հենց շումերներն են հայտնագործել նետն ու աղեղը, գութանը և անիվը: Առաջինը նրանք են սկսել աճեցնել կտավատը, ոլոռը, խաղողը... Ստեղծել են մի նոր մշակույթ՝ գարեջրի պատրաստումը և արձանագրություններ թողել դրա մասին:

Շումերներն ապրել են հազարավոր տարիներ առաջ, և գիտնականներին շատ բան չի հաջողվել բացահայտել նրանց մասին: Սակայն մի բան հստակ է՝ հենց նրանք են կանգնած մարդկության քաղաքակրթության ձևավորման ակունքներում:

ԾԵՐՈՒՆԻՆԵՐԻ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Բուլղարական ժողովրդական հեքիաթ

Մի դաժան արքա բոլոր ծեր մարդկանց կոտորելու հրաման արձակեց.
- Ի՞նչ օգուտ նրանցից՝ ո՛չ հերկել են կարողանում, ո՛չ հնձել, ո՛չ ցախ կոտրատել: Զուր տեղը հաց են ուտում, տանը՝ ոտքի տակ ընկնում: Առանց նրանց ապրելն ավելի լավ կլիներ:

Թագավորի դահիճները գործի անցան, բոլոր ծերերին կոտորեցին: Միայն մեկ ծերունի մնաց՝ մի իշխանի հայր: Իշխանը խղճաց իր ծեր հորը և թաքցրեց:
Դաժան արքան կամակոր սև նժույգ ուներ, որն աքացի էր տալիս, խրտնում էր, հեծյալներին տապալում գետնին: Արքան իմացավ, որ մայրաքաղաքում մի իմաստուն հեքիմ կին է ապրում: Հրամայեց պալատ բերել նրան և սկսեց հարցուփորձ անել, թե ինչպես կարելի է աշխույժ նժույգը սանձել:

- Արքա՛, - ասաց կինը, - հրամայի՛ր քո իշխաններին, որ ավազից պարան հյուսեն և դրանով ձիու երեք ոտքերը կապեն: Նժույգդ գառան պես հնազանդ կդառնա:
Թագավորը ծոծրակը քորեց և կանչեց իշխաններին.
- Հե՛յ, իշխաննե՛ր, լսե՛ք իմ հրամանը. վաղն առավոտյան ավազից հյուսված պարանն իմ ձեռքում պիտի լինի: Եթե առանց պարանի գաք պալատ, ձեր գլուխներն իրենց տեղերում չեն մնա: Իշխանները գլխահակ ցրվեցին: Այն իշխանը, որը խնայել էր հոր կյանքը, տուն եկավ մտախոհ և տխուր: Հայրը հարցրեց նրան.
- Ինչո՞ւ ես այդպես մռայլ, որդի՛ս:
Իշխանը հայտնեց արքայի հրամանը:

- Վիշտդ հեշտ է դարմանել, տղա՛ս, - ասաց ծերունին: - Վաղն առավոտյան, երբ թագավորը հարցնի՝ ո՞ւր է պարանը, դու նրան այսպես պատասխանի՛ր.

«Թագավորն ապրած կենա, մենք պատրաստ ենք ավազից պարան հյուսել, բայց չգիտենք, թե ինչ հաստության և ինչ գույնի պետք է լինի այն: Նմուշը մեզ ցո՛ւյց տուր»:
Հաջորդ օրն այդքան խելացի պատասխան լսելով՝ թագավորը գլուխը կախեց և ասաց.

- Իրավացի եք, ես պետք է ձեզ նմուշը տամ, բայց չեմ կարող:



Եվ արքան խնայեց իր իշխանների կյանքը: Նույն տարվա ամռանը երկրում երաշտ սկսվեց: Ցամաքեցին գետերն ու ջրերը, ամբարներում ցորեն չմնաց: Բոլորին սպառնում էր սովամահությունը: Թագավորը մտքերի մեջ ընկավ, կանչեց իշխաններին և հրամայեց.

- Ինչ ուզում եք, արե՛ք, բայց եթե վաղն առավոտյան ինձ չասեք, թե ցանքի համար որտեղից ցորեն գտնենք, ձեր գլուխները ձեր ուսերին չեն մնա:
Վշտացած իշխանները գնացին: Ծեր հայրը տեսավ, որ որդին արքայի մոտից դարձյալ սև ամպից էլ սևակնած է վերադարձել, հարցրեց՝ ի՞նչ է պատահել:

- Այս անգամ, հայրի՛կ, դու էլ չես կարողանա օգնել, - պատասխանեց իշխանը, - որովհետև թագավորին ցանքի համար ցորեն է պետք, իսկ ողջ երկրում ցորեն չկա:
- Մի՛ անհանգստացիր, տղա՛ս, - ասաց ծերուկը: - Երբ վաղը թագավորի մոտ գնաս, խորհուրդ տուր, որ նա հրամայի գյուղացիներին քանդել բոլոր մրջնանոցները: Դրանց մեջ ցորեն շատ կա. մրջյունները հատիկ - հատիկ հավաքել են:

Այդպես էլ արվեց: Գյուղացիները դաշտ դուրս եկան, փորփրեցին բոլոր մրջնաբները և յուրաքանչյուրում մի քսակ ընտիր ցորեն գտան: Խնդրի այս լուծումը շատ զարմացրեց թագավորին:

- Ասա՛ ինձ, այդ իմաստուն խորհուրդն ո՞վ տվեց քեզ, - հարցրեց նա այն իշխանին:
- Չեմ համարձակվում ասել, արքա՛, որովհետև ինձ կկործանես, - գլուխը խոնարհեց իշխանը:

- Խոստանում եմ, որ գլխիցդ մազ անգամ չի պակասի:

Իշխանը խոստովանեց, որ ժամանակին թաքցրել է հորը, և որ հենց հայրն է իրեն սովորեցրել թե՛ ավազե պարանի համար տրված պատասխանը, թե՛ ցորենի ճարն անելը: Այդ ժամանակ նոր օրենք դուրս եկավ. արգելվում էր ծերերին վիրավորելը, իսկ հանդիպելիս յուրաքանչյուրը պարտավոր էր նրանց զիջել ճանապարհը:



Խաղաղարար սիրտ

Բարև, ես Աստղիկն եմ: Աստծուն ճանաչում եմ շատ փոքր հասակից, երբ ձեր տարիքին էի: Հաճախում էի կիրակնօրյա դպրոց, որտեղ լսում էի աստվածաշնչյան տարբեր պատմություններ, բայց ամենակարևոր միտքը, որից շատ տպավորվել էի, հետևյալն էր. «Դուք պետք է Քրիստոսի նման լինեք»: Ասեմ, որ շատ դժվար էր դպրոցում, բակում, շրջապատում տարբերվել՝ հաճախ չանել բաներ, որ անում էին իմ հասակակիցները: Սակայն Աստված ինձ ուժ էր տալիս, որպեսզի սխալ ճանապարհով չգնամ:

Մի օր դպրոցում ընկերներս որոշեցին չար կատակ խաղալ մեր դասարանի ամենաթույլ աշակերտներից մեկի հետ: Ամբողջ դասարանը հավաքվեց և միասին որոշեցին ծաղրել նրան, քանի որ նա ֆիզիկական որոշ խնդիրներ ուներ և իր արտաքինով մի փոքր տարբերվում էր դպրոցի մյուս աշակերտներից: Գիտեի, որ դա շատ վիրավորական կլինի նրա համար:

Սզբից մտածում էի՝ ինչպե՞ս դեմ գնալ ամբողջ դասարանին, սակայն սրտումս անհանգստություն կար և այն ինձ հանգիստ չէր տալիս: Չէ՞ որ ես սովորել էի՝ «Ուր Տիրոջ Հոգին է, այնտեղ խաղաղություն է»: Որոշեցի չվախենալ և թույլ չտալ, որ նեղացնեն, վիրավորեն և ծաղրեն մեր դասընկերոջը: Արդյունքում բոլոր ընկերներս հեռացան ինձնից, սակայն շատ կարճ ժամանակ անց նրանք հետ վերադարձան և ներողություն խնդրեցին իրենց վատ և ոչ խաղարարար պահվածքի համար: Նրանք էլ ցանկացան մեզ նման ԽԱՂԱՂԱՐԱՐ ՍԻՐՏ ունենալ:

Սիրելի՛ ընթերցող,
իսկ դու ի՞նչ ես արել խաղաղարար
սիրտ ունենալու համար:
Կարո՞ղ ես որևէ նման պատմություն հիշել:

Աստղիկ Սարիբեկյան

Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ ճանապարհին: Սաղմոս 119.105

Ես Թամարան եմ Երևանից: ՀԱԵ անդամ եմ: Առաջին անգամ եկեղեցի հաճախել եմ պատանի հասակում: Պատանեկան պաշտամունքի ժամանակ Աստվածաշնչից հատվածներ էինք կարդում, ինչից հետո առաջնորդը մեզ հարցնում էր՝ «Ի՞նչ հասկացաք այս հատվածից»: Նախկինում Աստվածաշունչ կարդացել էի երևի հաշված անգամներ և երբեք չէի մտածել, թե ինչի մասին է գրված: Կարդում էի որպես գեղարվեստական գիրք: Սակայն այդ պահին սկսեցի մտածել տրված հարցի շուրջ, և քանի որ պատասխան չունեի, որոշեցի առաջնորդիս հետ խոսել այդ մասին: Նրա խորհուրդը շատ պարզ էր՝ «Աղոթի՛ր»: Եվս մեկ զարմանք: Ես երբևէ չէի մտածել, որ կարելի է դիմել Աստծուն և խնդրել Իր Խոսքը հասկանալու մասին: Որոշեցի աղոթել: Որոշ ժամանակ անց սկսեցի կամաց-կամաց հասկանալ՝ ինչի մասին էի կարդում, և Աստծո Խոսքը հասկանալուն զուգահեռ սկսեցի ճանաչել Աստծուն:

Աստծո Խոսքը սիրելու և կյանքում կարևորելու գլխավոր նախապայմանն Աստծուն սիրելն է, քանի որ եթե չսիրենք Աստծուն, չենք կարող սիրել այն ամենը, ինչի մասին Նա խոսում է մեզ հետ: Հետևաբար Աստծո Խոսքը սիրելու համար պետք է ցանկանանք ժամանակ անցկացնել Աստծո հետ, ինչպես անում ենք ընկերների կամ ընտանիքի անդամների պարագայում:

Սիրելի՛ բարեկամ, Աստված ասելիք ունի քեզ և ցանկանում է խոսել քեզ հետ Իր Խոսքի միջոցով: Կարդա՛ Այն, լսի՛ր Նրան, վայելի՛ր Նրա անսահման սերը:

Թամարա Էլբակյան

Կղզիներ խաղաղության համար

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

adidas
ORIGIN
BOSS

Happy
Birthday